ԳԼՈՒԽ ՃԽԵ.

Ամենայն ոք որում իցէ 'ի նմանէ գանգատեցեալ պարտ է հանդիմանողն տալ երաշխաւոր դատաստանին այր մի թղթաւ ձեռնադրեալ երաշխաւորութեան այսմ մտածութեամբ զի դատախազն եթէ փախիցէ երաշխաւորն գտցի 'ի տեղի նորայ, եթէ ոչ տացէ երաշխաւոր հանդիմանողն մտցի 'ի բանտ մինչ ելցէ վճիռ 'ի վերայ բանին նորա։

ԳԼՈՒԽ ՃԽԶ.

Ամենայն դատախազ եթէ մտցի 'ի բանտ վասն պարտուց, գանգատողն պարտէ հատուցանել վասն կերակրոյ և հարկաւորութեան նորա ամենայն աւուր մին դրամ երծաթոյ։

ԳԼՈՒԽ ՃԽԷ.

Որում բանտ արկեալ վասն պարտուց եթէ ոչ գտցի ամենայն աւուր մի դրամ երծաթոյ մինչև երիս աւուրս՝ բանտ արկեալն ազատ լիցի 'ի պարտուց, և 'ի հրամանի վճռոյն ելցէ ազատապէս 'ի բանտէն առ ուր և որ ինքն կամիցի, գանգատողն կորուսցէ ինչս իւր։

ԳԼՈՒԽ ՃԽԸ.

Բանտ պարտուց եղիցի բնակութիւն յատակ